

**Տ. ԽԱԴ ՔԱՀԱՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ**
(ավազանի անունը՝ Վիգեն)

Ծնվել է 1975 թվականին Էջմիածին քաղաքում:

1981-1991 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1991 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1998 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, անցել է ծառայության Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում:

1998-ի սեպտեմբերի 20-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. պաշտպանել է «Մատթեոս վրդ. Ջուղայեցու քարոզները» (ուսումնասիրություն, քննական բնագրեր) թեմայով ավարտաճառը:

Նույն թվականի նոյեմբերի 5-ին, ձեռամբ Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: